ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 60-Ա **02 փետրվարի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 319 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 23-ի N 16-Ա և 2022 թվականի փետրվարի 7-ի N 58-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 319-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի N 1-ի:

02.02.2024

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի փետրվարի 2 - ի
N60-Ա որոշման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 22 - ի
N 319 - Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վահան Զարոյան - Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, **հանձնաժողովի նախագահ**

Գևորգ Գալստյան - Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ /համաձայնությամբ/

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գևորգ Խաչատրյան - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ:»:

02.02.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ԲԱՆԱԿԱՆ

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ